Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11002/2025-ԱԱ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 7. Արարատի -1 (Արտաշատ, Մասիս) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.-30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 18.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 41 շահառուի Արարատի մարզի Արտաշատ և Մասիս համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում իրականացվել է 7 դեպքի վարում՝ հաշմանդամության կարգավիճակի ձեռքբերման կազմակերպում, աջակցող միջոցի՝ ձեռնափայտի ձեռքբերման կազմակերպում, հրատապ օգնության դիմումի կազման կազմակերպում, բժշկական փաստաթղթերի հավաքագրում և ստացիոնար բուժման կազմակերպում, նոր անձնագրի ձեռքբերման կազմակերպում, շահառուի կենսաթոշակային քարտի վերականգնման կազմակերպում, վերափաստագրման կազմակերպում:
  Հաշվետու ժամանակահատվածում թվով 4 շահառուի տրամադրվել է հոգեբանական առաջնային խորհրդատվություն, իսկ 1 շահառուի՝ շարունակական բնույթի անհատական հոգեբանական ծառայություն:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Տնային պայմաններում խնամքի ծառայությունից օգտվող 7 շահառու մասնակցել է Արտաշատի ցերեկային կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝ Տարեցների միջազգային օր (2 անգամ), էքսկուրսիա դեպի Լոռի, Գյումրի, մեդիագրագիտության սեմինար՝ «Դիմակայելով ապատեղեկատվությանը» խորագրով, «Ոսկե աշուն» (2), Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա նշում, Ամանոր (2 անգամ), միջոցառում կազմակերպված «Ծաղրածուներ առանց սահմանների» միջազգային ասոցիացիայի կողմից, շահառուի ծննդյան տարեդարձի նշում:
  Հաշվետու ժամանակահատվածում տնային խնամքի 3 շահառու ստացել է հիգիենիկ պարագաների փաթեթի տեսքով աջակցություն:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 41 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 41 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի

պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 23 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք. 17 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա: Ռուժքույրի միջնորդությամբ տեղամասային բժիշկները 2 շահառուի տունայց են իրականացրել և տան պայմաններում սոնոգրաֆիա կատարել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ մշակված նյութերը.

- Էքսկուրսիա դեպի Լոռի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/r/1aYTx7Qp8H/?mibextid=wwXIfr),
- Էքսկուրսիա դեպի Գյումրի (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/17UjPVB36u/?mibextid=wwXIfr),
- Մեդիագրագիտության սեմինար՝ «Դիմակայելով ապատեղեկատվությանը» խորագրով (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/17Wgmapzqc/?mibextid=wwXIfr),
- Ոսկե աշուն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/share/p/1AMn9qPV3H/?mibextid=wwXIfr):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 41/41 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 34 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 36 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –2<br>Բ - 39 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 41 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 41 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 41 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 7 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 17 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական աջակցություն | 5 |

Կազմակերպության ղեկավար <u>*Երվանդ Մխիթարյան*</u> «18»12.2025թ

[illegible]